ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 146 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված ներքոհիշյալ ապրանքների ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը՝

1) ԱՄՆ-ի «Հայաստան» հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության բժշկական հաստատություններին անհատույց հանձնելու նպատակով ուղարկված ուռուցքային հիվանդություններով հիվանդների համար նախատեսված պարագաները և տակդիրները՝ 21 տեղ, 141 կգ ընդհանուր քաշով, 2,445 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 350 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, բեռի ցանկը՝ համաձայն հավելվածի (Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն).

2) Ֆրանսիայի «Հայաստան» հիմնադրամի կողմից «Խարբերդի մասնա-գիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի համար ուղարկված էլեկտրամատակարարման միավորները՝ 18 տեղ, 2600 կգ ընդհանուր քաշով, 40,500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ և էլեկտրամատակարարման միավորները և ամրագրող շրջանակները՝ 22 տեղ, 3,600 կգ ընդհանուր քաշով, 49,500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ,

(փոխադրման ծախսերը կազմել են 10,610 եվրոյին համարժեք դրամ, բեռի ցանկը՝ համաձայն հավելվածի, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ու հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

28.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ